# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը և Շվեդիայի Թագավորության Ուպսալայի նահանգային իշխանությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով ավանդական բարեկամության և փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա, ինչպես նաև ելնելով իրենց փոխադարձ հետաքրքրությունից

- ամրապնդելու համակողմանի կապերը տարբեր ոլորտներում, մասնավորապես իրենց իրավասությունների շրջանակներում հեռանկարային և կիրարկելի համագործակցության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով;
- հաստատելու համագործակցություն տարբեր ոլորտներում իրենց ռեգիոնների միջև և ի շահ իրենց բնակիչների, համաձայն Հայաստանի Հանրապետությունում և Շվեդիայի Թագավորությունում գործող օրենքների,
- խրախուսելու իրենց մարզային մշակույթն ու ձեռքբերումները,

հայտարարում են իրենց մտադրությունները հետևյալի մասին.

1. Կողմերը կխրախուսեն լավագույն փորձի և գիտելիքների փոխանակումը արդյունավետ կառավարումն ու վարչարարությունը խթանելու նպատակով, այդ թվում օգտագործելով Հայաստան-ԵՄ համագործակցության օրակարգի առկա միջոցները:

2. Կողմերը իրենց իրավասությունների շրջանակում կխրախուսեն իրենց մարզերի հաստատությունների և անհատների միջև բարեկամական կապերի հաստատումը կառավարման, գործարարության, բնապահպանության, մշակույթի, կրթության և զբոսաշրջության ոլորտներում:

3. Կողմերը կուսումնասիրեն տեղական ինքնակառավարման մարմինների միջև շփումների և փոխանակումների հաստատմանն աջակցելու հեռանկարները ապակենտրոնացված համագործակցությունը խթանելու նպատակով, այդ թվում նաև օգտագործելով եվրոպական կազմակերպությունների հնարավորությունները:

4. Կողմերը կխրախուսեն համակողմանի փոխանակումների հնարավորությունները արվեստի, կրթության և մշակույթի ոլորտներում, այդ թվում ցուցահանդեսների, փառատոնների և համաժողովների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության փոխանակմամբ:

5. Լոռու մարզպետարանը ստանում է Ուպսալայի նահանգային իշխանության աջակցությունը Լոռու մարզում տնտեսական զարգացման նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը տարածելու գործում առևտրական հարաբերությունները և ներդրումները խթանելու նպատակով:

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը ստորագրվել է Ուպսալայում, 2016թ. մայիսի 31-ին, երկու օրինակից, հայերեն և անգլերեն լեզուներով:

| Լոռու մարզպետարանի կողմից | Ուպսալայի նահանգային իշխանության կողմից |
|---|---|
| Արթուր ՆԱԼԲԱՆԴՅԱՆ<br>Մարզպետ | Պիտեր ԷԳԱՐԴՏ<br>Նահանգապետ |